Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի

9 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-սխալ; ե-սխալ; զ-սխալ; է-սխալ; ը-ճիշտ (**յուր.՝ 0.25միավոր**)

2. բ (**1 միավոր**)

3. Եթովպիա (**1 միավոր**)

4. Լրացված աղյուսակը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք (**1միավոր**):

Տրանսպորտի տեսակ	Բեռների զանգված (մլն տ)	Տեղափոխման միջին հեռավորություն (կմ)	Բեռնաշրջանառություն
Լճագետային	12	500	6000
Ավտոմոբիլային	120	50	6000
Երկաթուղային	80	200	16000
Խողովակաշարային	100	800	80000
Օդային	10	1200	12000

Հաշվարկային մեկ սխալի դեպքում՝ 0.75միավոր, 2 սխալի դեպքում՝ 0.5միավոր, 3 սխալի դեպքում՝ 0.25միավոր, 4 և 5 սխալի դեպքում՝ 0միավոր:

ա. – 120 մլրդ տ-կմ (**0.5միավոր**)

բ. – Ջրային՝ 5% (**0.25միավոր**); ցամաքային՝ 85% (**0.25միավոր**); օդային՝ 10% (**0.25միավոր**)

գ. – հարթավայրային (**0.25միավոր**), ինչը երևում է ինչպես լճագետային փոխադրումների մեծ հեռավորություններից, այնպես էլ երկաթուղային տրանսպորտի խիստ գերակշռությունից ավտոմոբիլայինի նկատմամբ (**0.5միավոր**):

5. Լրացված աղյուսակը կունենա հետևյալ տեսքը՝ **1միավոր**

Մարզ	Ա	Բ	Գ	Դ
Վարելահող (հազար հա)	50	150	80	40
Միջին բերքատվություն (ց/հա)	20	18	20	25
Ակնկալվող բերք (հազար տոննա)	**100**	**270**	**160**	**100**
Մելիորացիայի կարիք ունեցող վարելահող (հա)	5	25	20	2

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0.25միավոր: Եթե հաշվարկը ճիշտ է, սակայն տոննայով չի ներկայացված՝ առավելագույնը 0.5միավոր:

ա. 52մլն ՀՀ դրամ **0.5միավոր**:

բ. Արհեստական ոռոգում կամ իռիգացիա **0.5միավոր**:

գ. Քանի որ մելիորացիայի համար պահանջվող ծախսը 52մլն ՀՀ դրամ է**, իսկ ակնկալվող հավելյալ բերքը՝ 100 տոննա, հետևաբար 1 տարում ակնկալվում է 4մլն ՀՀ դրամ հավելյալ եկամուտ (միայն սա որոշելու համար՝ 0.5միավոր); ծախսածածկման համար կպահանջվի՝ 52մլն/4մլն=13տարի (ևս 0.5միավոր)**

6. ա. Բրունեյ, Թաիլանդ, Մալայզիա, Կամբոջա:

բ. գետահովտաղարավանդային, աղուտ-ալկալի, կուլտուր-ոռոգելի, կմախքային: Ճիշտ համարել նաև ճահճային հողատեսակները:

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել **0.25միավորով**:

7. Սիրիա, Ուկրաինա, Մեքսիկա, Հնդկաստան

Իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար՝ **0.25միավոր**

8. ա. ՀՀ հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում կլիման չոր մերձարևադարձային է և բնութագրվում է մեղմ ձմեռներով և շոգ ամառներով, որի պայմաններում նվազում է ցրտահարության ռիսկը, իսկ արևի առատությունը նպաստում է մերձարևադարձային պտուղների աճին և ստացվող բերքի բարձր որակին: Արարատյան դաշտում կլիման ավելի

խիստ է, ուղեկցվում է ջերմաստիճանային ինվերսիաներով, ցրտահարություններով և կարկտահարություններով, ինչպես նաև բարձր է օդի աղտոտվածությունը և ցածր է հողի որակը: Լիարժեք պատասխանը՝ **1միավոր**

բ. Ավստրալիայի տարածքի զգալի մասը արևադարձային գոտում է, որտեղ գերակշռում են բարձր ճնշումն ու օդի վարընթաց շարժումը: Ավստրալիայի արևելքով ձգվող Մեծ Ջրբաժան լեռնաշղթան էլ իր հերթին խոչընդոտում է խոնավ օդային զանգվածների ներթափանցմանը: Ավստրալիայի արևմուտքում Արևմտաավստրալական սառը հոսանքն է, որը կլիմայի վրա չորացնող ազդեցություն է թողնում: Եթե աշակերտը ներկայացրել է առաջին երկու գործոնները լիարժեք՝ **1միավոր:**

9. ա. Զարգացած երկրներում դիտվում է արտադրության անկում (**0.25միավոր**), մինչդեռ զարգացող երկրներում արտադրությունն ավելանում է (**0.25միավոր**):

բ. Ինդոնեզիա (**0.5միավոր**)

գ. Ինդոնեզիան դինամիկ զարգացող արդյունաբերական երկիր է (ՆԱԵ), որտեղ բնակչության թվի ու ուրբանիզացիայի աճը հանգեցնում են մեծածավալ քաղաքաշինության, որը պողպատի ներքին պահանջարկի աճ է ստեղծում: Կարևոր է նաև միջազգային շուկայում պողպատի պահանջարկը, որը բավարարելու համար զարգացող երկրները զգալիորեն ավելացնում են իրենց «էժան» պողպատի արտահանման ծավալները (յուրաքանչյուրը՝ **0.5միավոր**):

10. ա. Մերձարևադարձային մշտադալար կոշտատերև անտառների և թփուտների (ընդունել նաև այդ զոնան բնորոշող անվանումները՝ մաքվիս, գարիգա, չապառալ) (**0.5միավոր**): Միջերկրածովային կլիմայի պայմաններում ձևավորվող այս սահմանափակ տարածվածություն ունեցող զոնան հազարամյակներ շարունակ բնակեցված է և մեծապես ձևափոխված գյուղատնտեսական նպատակներով (**0.5միավոր**):

բ. Կուրի (**0.25միավոր**), քանի որ վերջինիս ավազանը համընկնում է ՀՀ հյուսիս-արևելքի հետ, ուր թափվում են ամենաառատ տեղումները, իսկ գետերը հիմնականում ունեն ձնհալքաանձրևային սնում, ի տարբերություն Արաքսի ավազանի գետերի, որոնք նաև ունեն ստորերկրյա ջրերով սնման էական մասնաբաժին և սեզոնային տատանումների քիչ են ենթարկվում (**0.75միավոր**): Թերի բացատրությունների համար լիարժեք միավոր չի տրվում:

11. Ա-Նիգերիա; Բ-Սաուդյան Արաբիա; Գ-Ավստրալիա; Դ-Ճապոնիա (**յուր.՝ 0.25միավոր**)